

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱՅԻ ՀԱՎԱՔԱԳՐԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՍԱՏԵՔՍՈՒՄ*

Կատերինա Ալթունյան

Բանակի բառեր՝ քաղաքական էլիտա, քաղաքական կուսակցություն, էլիտաների հավաքագրում, խորհրդարանական էլիտա, էլիտայի հավաքագրման կառուցակարգեր, հավաքագրման բաց համակարգ, կուսակցությունների ինստիտուցիոնալացում, ներկայացուցական ժողովրդավարություն, կուսակցական համակարգ:

Հասարակության կառավարման որևէ օղակում ընդգրկվել հնարավոր չէ՝ առանց կազմակերպության մաս կազմելու: Կառավարող էլիտաների ուսումնափրություններով գրադպու դասական տեսարանների համոզմամբ՝ քաղաքական էլիտայի հավաքագրումը բաց համակարգով ապահովում են կուսակցությունները: Դրանց շնորհիվ պայքարն իշխանության համար ընթանում է ոչ թե բացառապես արհստոկրատիաների, այլ իշխող էլիտայի և կոնտրէլիտայի միջև, որոնցից յուրաքանչյուրը ապավինում է ընտրազանվածի աջակցությամբ[1]: Այս իմաստով՝ ժամանակակից քաղաքական կուսակցությունների ստեղծման հիմնաքարը առաջին անգամ դրվել է էլիտաների դասական հայեցակարգի շրջանակներում: Հայազգի գիտնական Մ. Մինասյանը, ով փաստացի տարանջատել է քաղաքական էլիտան և իշխանությունները, նշում է, որ քաղաքական էլիտան ինչպես քաղաքականության մեջ հաստատված, այնպես էլ սեփական քաղաքականությունն ունեցող ուժը է հասարակության մեջ[2]: Քաղաքագետ Մ. Մարգարյանը, քաղաքական էլիտայի հավաքագրման ուղիներ ասելով, նկատի ունի դեպի քաղաքական պաշտոնակարգության գագաթ տանող ձանապարհները: Այդ կարգի հիմնախորհուցիոնալ ուղիների շարդին նա դասել է պետական ապարատը, ՏԻՄ-ը, բանակը, քաղաքական կուսակցությունները, կոթական համակարգը: Լինելով սելեկտիվ (տեսակավորման) ու էլեկտիվ (ընտրական) կառուցակարգերի համապարփակ գործընթաց՝ քաղաքական էլիտայի հավաքագրումը, մեր կարծիքով, ենթադրում է հետազոտության լայն դաշտ ու բազմաթիվ դերակատարներ: Բացի քաղաքական և պետական կառուցական դրամական դերակատարներից՝ ժողովրդավարական հասարակական-քաղաքական համակարգերում առկա է դերակատարների լայն ընտրանք (անկախ լիդերներ, քաղաքացիական հասարակության ակտիվիստներ, հասարակական-քաղաքական ու բիզնես-կազմակերպությունների դեկավարներ և այլն), որոնք, լինելով քաղաքականության վրա ազդող, թեև դեյլուր կառավարողների ու իշխանության համակարգից դուրս գործող ուժեր, նոյնպես մասնակցում են քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացին: Ենելով վերոնշյալ մոտեցման տրամաբանությունից՝ կուսակցությունները կարող են դասվել դերակատարների ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ դասին: Այդուհանդերձ, կուսակցությունները՝ որպես քաղաքական էլիտայի հավաքագրման ֆորմալ կառուցակարգեր, կոչված են ոչ միայն լինելու քաղաքականության մեջ, այլև կատարելու որոշակի քաղաքական գործառույթներ: Ժամանակակից քաղաքագիտության շրջանակներում քաղաքական էլիտայի հավաքագրման ուղիների ուսումնասիրության տեսանկյունից կարևորվում են ոչ այնքան ընտրությունները, որքան կուսակցություններն ու դրանց գործառույթները: Մասնակական քաղաքագիտության շրջանակներում քաղաքական էլիտայի հավաքագրման ուղիների ուսումնասիրության տեսանկյունից կարևորվում են ոչ այնքան ընտրությունները, որքան կուսակցություններն ու դրանց գործառույթները: Ավե-

* Հոդվածն ընդունվել է 30.01.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

լին՝ կուսակցության ինստիտուտն ավելի հին է, քան ընտրությունների ինստիտուտը։ Կուսակցությունը՝ որպես քաղաքական համակարգի առանցքային դերակատար, ներկայացուցչական ժողովրդավարության տեսության դիրքերից կատարում է քաղաքական էլիտայի հավաքագրման և իշխող էլիտայի քաղաքական սոցիալիզացման, իսկ որպես քաղաքացիական ինստիտուտ՝ հանրային շահերի արտիկուլացման, քաղաքական ծրագրերի արաջքաշման, քաղաքական վարչակարգի լեգիտիմացման գործառույթները։ Վերջիններս ընդգծվում են նաև Ռ. Հանթերի ու Լ. Դայմոնդի կողմից առաջ քաշված դասակարգման շրջանակներում, համաձայն որի՝ առանձնացվում են գործառույթների ներկայացուցչական (քաղաքականության մշակման գործընթացը) և ինստիտուցիոնալ (խորհրդարանական ու կառավարական գործունեություն) տեսակները [3]։ Գործառույթների վերոնշյալ դասակարգումներից ենելով՝ կուսակցությունը արդի քաղաքական համակարգերում ունի թե՛ քաղաքացիական, թե՛ քաղաքական ինստիտուտի կարգավիճակ ու գործառույթներ։ Երկրորդի գործառությունը, մասնավորապես ժողովրդավարական վարչակարգերում, ուղակիորեն կապված է քաղաքական համակարգի առանցքային ինստիտուտների խորհրդարանի ծնավորման, ընտրությունների կայացման գործընթացների հետ։ Ըստ այդմ՝ կուսակցության որպես քաղաքացիական և քաղաքական ինստիտուտի գործառույթները ոչ միայն տարբերվում են, ինչպես Ռ. Միխելսն է նշում, այլև նվազում կամ ավելանում են՝ ենելով կուսակցության՝ հասարակական-քաղաքական համակարգում գրադեցրած դեյտրե կարգավիճակից կամ ինստիտուցիոնալացման մակարդակից [4]։

Կուսակցությունները՝ որպես քաղաքական էլիտայի հավաքագրման ուղիներ, բացարիկ դեր ունեն ինչպես խորհրդարանական, այնպես էլ նախագահական հանրապետություններում։ Այն կարծիքը, թե նախագահական հանրապետություններում կուսակցություններն իշխանության չեն գալիս ու չեն կառավարում՝ չկատարելով քաղաքական էլիտայի հավաքագրման հիմնական խողովակի դեր, այնքան էլ ճիշտ չէ։ Կուսակցությունը նախագահական հանրապետություններում կարող է իշխանության գալ, օրինակ, նախագահական ընտրություններում առանձին թեկնածու առաջադրելու միջոցով։ Բացի դրանից՝ քաղաքական ցանկացած առաջնորդի կամ առաջնորդների խմբի մոտ վաղ թե ուշ ի վեցող ժագում է քաղաքական կուսակցության վրա հենվելու օբյեկտիվ պահանջմունքը (եթե, իհարկե, նախագահն անկուսակցական է)։ Կուսակցությունների դերակատարության ու քաղաքական ակտիվության թերագնահատումը նախագահական հանրապետություններում, մասնավորապես քաղաքական էլիտայի ծնավորման և կառավարման գործընթացի տեսանկյունից, գործնական հիմնավորում չունի, ավելին՝ նման հիմնավորում փնտրելն անհնաստ է, որովհետև դա հակասում է ժողովրդավարական կառավարման տեսությանն ու սկզբունքներին։ Ինչևէ, շատ չխորանալով նախագահական կառավարման ծնուն կուսակցության քաղաքական էլիտայի հավաքագրման գործառույթի իրականացման խնդրի մեջ՝ նշենք, որ նախագահական կառավարման ծնուն կուսակցության քաղաքական համակարգի լեգիտիմացման գործառույթը սահմանափակված է ու էականորեն գիշում է խորհրդարանական հանրապետությունների պրակտիկային։

Կուսակցական համակարգերի, կայուն ու ժողովրդավարական քաղաքական էլիտայի ծնավորման ու հավաքագրման հաջողված փորձ ունեն գիշավորապես խորհրդարանական կառավարման ծնուն կուսակցությունը։ Քաղաքական իշխանության համար պայքարը խորհրդարանական կառավարման ծնուն կուսակցությունը ի սկզբանե սկսվել է խորհրդարանից՝ հաշվի առնելով նաև պատմական այն իրողությունը, որ կուսակցությունը

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

յունների ստեղծման պահին համընդիանուր քնտրական իրավունքը չի եղել (վերջինս ընդունվել է միայն 1867 թ.), բայց այսօր արդեն չի սահմանափակվում միայն խորհրդարանով: Հաշվի առնելով, որ պարտոգենեզի պատմությունը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի (ԿԱԵ) և արևմտաեվրոպական խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրների մեջ մասում սկսվել է խորհրդարանական միություններից, քաղաքական էլիտան ու իշխանությունն այստեղ ասոցացվում են խորհրդարանական կուսակցությունների ձևավորման, կայացման և համախմբման գործընթացների հետ: Քաղաքական կուսակցություններն ու պետական իշխանությունն որանցում նույնացվում են, իսկ խորհրդարանական հանրապետություններին տրվում է փոխարերական իմաստ՝ «կուսակցապետություններ» բնորոշնամբ:


Խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրներում քաղաքական էլիտայի հավաքրուման կառուցակարգերի մասին հետազոտական հարուստ էմպիրիկ նյութ կարելի է գտնել անցունագիտությունում (տրանզիտալոգիա) [5]: Գիտակարգը հագեցած է տարբեր երկրներում (այդ թվում՝ ԿԱԵ և նախկին Խորհրդային Միության (ԽԽՄ)) ավտորիտար քաղաքական վարչակարգերի փոփոխման և ժողովրդավարական անցման տեսություններով, որանցում ծևավորված քաղաքական էլիտաների մոդելային սխեմաներով, հավաքրուման խողովակների վերլուծություններով և այլն: Մեծ մասսամբ արևմտյան տեսաբանների մոտեցումներն արտացոլու այդ հսկայածավալ նյութը մշակվել է «հարևան հայացքի» սկզբունքով: Միայն վերջին երկու տասնամյակների ընթացքում ԿԱԵ և ԽԽՄ համակարգի երկրներում լայնածավալ ուսումնասիրություններ են արվել ժողովրդավարական անցման գործընթացների, անցման պայմանների, քաղաքականության հիմնական դերակատարների, այդ թվում՝ քաղաքական էլիտաների ծևավորման ու արդիականությունը չկորցրած այլ թեմաների ու խնդիրների վերաբերյալ [6],[7]: Այդ ուսումնասիրությունները շարունակվում են մինչ այսօր, և հնարավորություն են տալիս ներքին գնահատականներ տալու այն բոլոր քաղաքական գործընթացներին, որոնք տեղի են ունեցել 20-րդ դարի վերջերին աշխարհաքաղաքական այդ լանդշաֆտի պետություններում: Ժողովրդավարական անցման վերոհիշյալ բազմավեկտոր հետազոտություններում քաղաքական վարչակարգերի փոփոխությունը, ժողովրդավարական համախմբման մոդելների, սցենարների նմանությունների ու տարրերությունների, անցման պայմանների ու զարգացման հետագծերի համեմատությունը թե ԿԱԵ ու թե՝ ԽԽՄ երկրներում արժեքավոր են հատկապես քաղաքական էլիտայի ծևավորման և հավաքագրման ինստիտուցիոնալ խողովակների վերլուծության տեսանկյունից: Հատկանշական այս է, որ ԿԱԵ երկրներում խորհրդային կարգերի փուլացման հ վեր, քաղաքական էլիտայի հավաքրուման բաց համակարգի հաստատման և ժողովրդավարական համախմբան (կոնսոլիդացիայի) գործընթացի հաջողությունը կապում են կուսակցությունների հնաստիտուցիոնալացման, կուսակցական համակարգերի կայունացման հետ: Պատմահամեմատական մեթոդը թույլ է տվել մեզ առանձնացնել վերոնշյալ գործընթացի երկու փուլեր և դրանց հատկանշական կրիտերիաներ: Առաջին փուլում կուսակցությունների ու կուսակցական համակարգերի հնաստիտուցիոնալացման գործուն կառուցակարգեր են եղել՝

- ինքնին անցումը խորհրդարանական կառավարման ձևին,
- բազմակուսակցական համակարգի մերդումն ու կուսակցությունների իրավական կարգավիճակի սահմանումը,
- կուսակցությունների սոցիալական հենքի ստեղծումը՝ էլիտայի հավաքագրման մերքից վերև սկզբունքով իրականացման նպատակով,
- քաղաքականության ու «խաղի կանոնների» չափարիչների, քաղաքական էլի-

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

տայի պրոֆեսիոնալիզմը գնահատելու չափանիշների (խորհրդարանական աշխատանքի ստաժ, կրթություն, ընտրարշավային փորձ, խորհրդարանի «մասմագիտական ավագանի» և այլնի) սահմանումը էլիտայի ներսի և դրսի հատվածները տարանջատելու նպատակով:

ԿԱԵ երկրների մեծ մասում բազմակուսակցական համակարգի հաջողությունը պայմանավորվել է բաղաքական կուսակցությունների գործունեության լեզարդման և կուսակցությունների մասին օրենքների ընդունման գործընթացով: Այստեղ առանցքային է ընդգծել հենց Վերոնշյալ հիմնադրույթները և ոչ թե այլուրախզմի հանդեպ բաղաքական համուրածողականության բարձր մակարդակը, քանի որ այլուրախզմը դեռ չի երաշխավորում բաղաքական հշխանության ծևավորման ու որոշումների ընդունման գործընթացին բոլորի մասնակցությունը: Բաղաքական համակարգի էլիտայաստեղծ գործառույթ են իրականացնում, ինչպես վերը նշեցինք, բացառապես հշխանության մաս հանդիսացող բաղաքական կուսակցությունները: Այս իմաստով Լայփհարտը տարանջատել է «կուսակցությունների թիվ» և «կուսակցական համակարգ» հասկացությունները [8]: Խորհրդարանական հանրապետություններում բաղաքական էլիտայի հավաքագրման տրամարանությունը բխում է, ընդհանուր առմամբ, կուսակցական համակարգերի տիպաբանությունից: Միակուսակցական համակարգերում գործում է բաղաքական էլիտայի հավաքագրման փակ համակարգ ոչ միայն մի կուսակցության կառավարման, այլ նաև հշխանություն-սեփականություն միասնության սկզբունքից ելնելով: Երկկուսակցական համակարգերում բաղաքական էլիտայի հավաքագրում իրականացվում է երկու կուսակցությունների միջև՝ առաջնորդվելով բաղաքական մեծամասնության, հշխանություն-ընդդիմություն սկզբունքով: Բազմակուսակցական համակարգերում բաղաքական էլիտան հավաքագրում է փաստացի խորհրդարանական խմբակցություններ (ֆրակցիաներ) ունեցող կուսակցություններից: Խորհրդարանական խմբակցություններ ունեցող կուսակցությունների թիվը, օրինակ, ԿԱԵ երկրների դեպքում, բազմակուսակցական համակարգին անցնելուց ի վեր, պահպանվում է 5-7-ի միջակայրում (տես **Գծապատկեր 1**) [9]: Բազմակուսակցական համակարգերում բաղաքական էլիտայի հավաքագրման բաց համակարգի ապահովման խնդիրը, ի տարբերություն առաջին երկու կուսակցական համակարգերի, պայմանավորված է ոչ միայն կուսակցությունների թվով, այլև կուսակցական դաշինքներ կազմելու, ընտրական համակարգի առանձնահատկություններով: Դրան գուգահեռ՝ կուսակցությունների ինստիտուցիոնալացման գործընթացը պայմանավորող գործուներ են նաև կուսակցության կազմակերպական կարուցվածքը, կադրային բաղաքականությունը, կուսակցության ներսում ժղովրդավարության ավամդույթների հաստատման, ճյուղավորման, ներկայացուցական և այլ չափանիշներ, որոնց կանդադարանանք մի փոքր ներքնում:



Կուսակցությունների ինստիտուցիոնալացման գործընթացը, որի հաջողությամբ աչքի են ընկնում խորհրդարանական կառավարման ծև ունեցող հանրապետությունները, կառուցվածքային, գործառութային փոփոխություններին զուգահեռ, ուղեկցվել է նաև կուսակցական գործունեության օրենսդրական կարգավորման ու վերահսկման համապատասխան փոփոխություններով։ ԿԱԵ երկրների մեծ մասում, ինչպես նաև խորհրդարանական կառավարման ծև ունեցող արևմտաեվրոպական երկրներում, կուսակցությունների մասին օրենքներում հստակ սահմանագիծ է անցկացվում խորհրդարանում ընդգրկված և այդպիսին չհանդիսացող կուսակցությունների միջև։ Ըստ Վերոնշյալի՝ քաղաքական համակարգի էլիտայաստեղծ գործառույթ են իրականացնում քացառապես իշխանության ու քաղաքական համակարգի մաս կազմող քաղաքական կուսակցությունները։ Քաղաքական համակարգի մաս կազմել, ըստ Կ.Բերատայի, նշանակում է լիիրավորեն մասնակցել քաղաքական որոշումների ընդունման, քաղաքականության մշակման և պետական կառավարման մարմինների ծևավորման գործընթացներին [10]։ Հասարակական-քաղաքական գործընթացներին մասնակցելու կուսակցության իրավունքներն ու պարտականություններն առհասարակ նախատեսվում են նաև սահմանադրությամբ, օրենքներով և իրավական այլ ակտերով։ Հատկանշական է այստեղ այն, որ ամբողջ աշխարհում, անկախ կառավարման ծևից, օրենսդրական կարգավորման բարձր մակարդակով աչքի է ընկնում հատկապես կուսակցությունների արտախորհրդարանական ու ընտրական գործունեությունը (ներառում է կուսակցական մարմինների ստեղծման, ֆինանսավորման, պետական և քաղաքական պաշտոններին թեկնածուների առաջարկման, ընտրարշավներին մասնակցության և մոցակցության օրենսդրական կետեր)։ Մինչեւ կարգավորման անհամենատ թույլ մակարդակ ունի կուսակցությունների խորհրդարանական և կառավարչական գործունեությունը (ներառում է խորհրդարանական խմբակցությունների, ազգային, տարածքային և տեղական մարմիններում քաղաքական կուսակցությունների գործունեությունը)։ Վերոնշյալից կարելի է պարզապես մի հետևություն անել, որ, թեև կուսակցությունների ինստիտուցիոնալացման ու գործունեության օրենսդրական կարգավորման նման կառու-

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ցակարգերը նպաստել են ընդհանուր առմամբ, քաղաքական էլիտայի հավաքագրման ավելի բաց համակարգի ձևավորմանը՝ քաղաքական խաղի կանոնների և էլիտայի ներսի ու դրսի հատվածների սահմանան տրամաբանությունից ելնելով, այնուամենայնիվ օրենսդրական դաշտում շարունակում է բաց մնալ հատկապես խորհրդարանական և կառավարչական գործունեության շրջանակներում քաղաքական կուսակցությունների քաղաքական պատասխանատվության խնդիրը և գործունեության կարգավորման մի շարք այլ ասակելուներ: Քաղաքական կուսակցությունների հնատիտուցիոնալացման խնդիր համակողմանի ուսումնասիրության բաղկացուցիչ մաս են կազմում դրանց կառուցվածքային ու կադրային քաղաքականության որոշ ասակելուներ: Քաղաքական կուսակցություններից են ձևավորվում պետության գործադիր, օրենսդիր, պետական կառույցների ղեկավար կադրերը: Կուսակցությունը՝ որպես քաղաքական էլիտայի հավաքագրման հնատիտուցիոնալ հիմնական խողովակ ճանաչող ներկայացուցչական ժողովրդավարություններում, քաղաքական բյուրոկրատիան ձևավորվում է կուսակցականության սկզբունքով: Այդ պատճենով, խորհրդարանական կառավարման ծև ունեցող պետություններին, առհասարակ տիպական է քաղաքական և վարչական պաշտոնների համատեղման փորձը: Կուսակցության կադրերի հավաքագրումը կատարվում է խորհրդարանական և կառավարական բարձր պաշտոնների նշանակման հեռանկարից ելնելով: Հաշվի առնելով այդ նպատակի առաջնայնությունը՝ նույնիսկ ժողովրդավարական կառուցվակարգերով իրականացվող կադրային քաղաքականությունը չի կարող արդյունավետ լինել՝ առանց կադրային ներքին գոտիների (կուսակցության շարքերում կատարված աշխատանքներ, կադրային հաստուկ դպրոցներ, բյուրոկրատիա և այլն): Քաղաքական կուսակցությունների դասական կառուցվածքը՝ քաղաքացած կուսակցական ղեկավարությունից, խորհրդարանականների և շարքային անդամներից, էականորեն փոխվել: Ժամանակակից կուսակցությունները կառուցվածքային բարդ համակարգ ունեցող հնատիտուտներ են, որի մեջ մտնում են կուսակցության գործադիր մարմնի մշտական աշխատակիցները, ընտրովի մարմինների անդամները, մասնագետները (փորձագետներ, ռեֆերենտներ), տեխնիկական անձնակազմը և այլն: Սակայն քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացը պայմանավորող որոշիչ գործուներից մեկը ոչ թե ինքնին ստորակարգային (հիերարխիկ) կառուցվածքի ուսումնասիրությունն է, այլ կուսակցության կենտրոն-ծայրամաս հարաբերությունների կարգավորման մեթոդներն ու կառուցակարգերը: Խորհրդարանական կառավարման ծև ունեցող երկրներում քաղաքական էլիտայի հավաքագրման բաց համակարգը, ըստ Վելինգտոնի համաստրանի պրոֆեսոր Թ. Էլիսբաումի, ենթադրում է պետական մարմինների ու քաղաքական կուսակցությունների միջև կադրային ռոտացիայի կառուցակարգերի ստեղծումը [11]:

Քաղաքական կուսակցությունների կադրային քաղաքականության արդյունավետության ու հանրային պատասխանատվության բարձրացման կառուցվակարգերը կայացած կուսակցական համակարգեր ունեցող պետություններում ևս կարգավորվում են օրենքով և իրավական այլ ակտերով: Այս իմաստով օրինակելի է Մեծ Բրիտանիայում ներդրված խորհրդարանական ընտրությունների կուսակցական ցուցակների կազմման գործընթացը վերահսկող ու կարգավորող վերկուսակցական մարմնի ստեղծումը: Ակսած 2001 թ-ից՝ խորհրդարանական թեկնածուների հավա-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

քագրման ու հաստատման գործընթացը բրիտանական կուսակցությունների պրակտիկայում իրականացվում է խորհրդարանի գնահատման պալատի կողմի [12]: Բազմակուսակցական համակարգ ունեցող արևմտաեվրոպական այնպիսի երկրներում, ինչպիսին է Գերմանիան, նման կառուցակարգերից է կուսակցական ցուցակներում առանձին թեկնածուներ ընտրելու հնարավորությունը: Ինչ վերաբերում է ԿԱԵ երկրներին, ապա կադրային քաղաքականությունն ու կուսակցական ցուցակների կազմնան գործառությունները շարունակում են մնալ կուսակցության առաջնորդների կոմպետենտության շրջանակներում:

Անփոփելով կուսակցությունների ինստիտուցիոնալացման գործընթացի առավել կարևոր ասպեկտները, ինչպես նաև մեր կողմից հնչեցված խնդիրներն ու հարցադրումները քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի համատեքստում, որի ընթացքում նկատի է առնվել նաև ԿԱԵ երկրներում ինստիտուցիոնալացման ու անցման գործընթացի հաջողությունը պայմանավորած գործոնների ու պրակտիկայի վերաբերյալ համապարփակ նյութը կուսակցությունների ինստիտուցիոնալացման երկրորդ փուլի (բայց էլույան, այն նշանավորեց նաև ժողովրդավարկան համախմբան գործընթացը) արդյունքները կարելի է թվարկել կետերով: Այսպես՝ երկրորդ փուլի արդյունքում

- սահմանվել է խորհրդարանական կուսակցությունների կայուն թիվը,
- մշակվել է խորհրդարանական էլիտայի հավաքագրման բաց համակարգ,
- ընդգծվել է քաղաքականության իրականացման թիմային սկզբունքի կարևորությունը՝ քաղաքականությունն ամենային դեպքի թիմը փոխադրելու համար,
- ընդայնվել է կուսակցությունների սոցիալական հենքը հիմնականում ռեգիոնալ ու միջազգային ինտեգրման կառուցակարգերի միջոցով,
- ձևավորվել է արիեստավարժ քաղաքական էլիտա հիմնականում նախարարական և խորհրդարանական պաշտոնների համատեղման սկզբունքից հրաժարվելու միջոցով:

Թվարկված հիմնասկզբունքները կոնսոլիդացված քաղաքական կուսակցությունների ու կուսակցական համակարգերի ստեղծման անհամեշտ պայմաններ են բոլոր այն երկրների համար, որտեղ կուսակցությունները հանդիսանում են քաղաքական էլիտայի հավաքագրման հիմնական ինստիտուցիոնալ խողովակը կամ ուղին: Քաղաքական կուսակցությունների որպես էլիտայաստեղծ խողովակի ուսումնասիրությունն այսօր առավել քան երբեմ արդիական է մեզ համար, չնայած կուսակցությունների հետազոտության թեման նոր չէ հայ քաղաքագիտական մտքի շրջանակներում [13], [14], [15]: Բազմակուսակցականության սկզբունքը որպես << քաղաքական էլիտայի հավաքագրման սկզբունք, իր օրենսդրական ամրագրումը ստացավ հետխորհրդային առաջին խկ տարիներից (1991 թ. փետրվար): Այդուհանդեռձ, կուսակցությունների ինստիտուցիոնալացման գործընթացն ամբողջությամբ ավարտված չէ մեր իրականության մեջ: Այս իմաստով հոդվածում մատուանշված իրողությունների ու խնդիրների շուրջ հարցադրումները կարող են նոր հորիզոններ բացել՝ գործընթացն ավարտին հասցնելու ակնկալիքով:»

Համեմատելով << և ԿԱԵ երկրների պարտողենեղի պատմությունը՝ առանձնացրել ենք որոշ ընդհանրություններ: Ինչպես ԿԱԵ երկրներում, այնպես էլ <<-ում, խորհրդային միակուսակցական վարչակարգից անցում է կատարվել բազմակու-

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

սակցական վարչակարգի: Ընդ որում՝ կուսակցությունների ինստիտուցիոնալացման գործընթացը երկու դեպքում է բնութագրվում է քաղաքական կուսակցությունների ստեղծման ուղիների ընդհանրությամբ, այլ բնորշմամբ՝ պատմական կուսակցությունների վերածնման, նոր կուսակցությունների ստեղծման ու կոմունիստական կուսակցության կերպակոխման միջոցով։ Կուսակցությունների ներքին տարբերակման գործընթացի արդյունքում խոշոր քաղաքական միություններից ու դաշինքներից ածանցվեցին քազմաթիվ փոքր ու միջին քաղաքական ուժեր։ Այսուամենայնիվ, կուսակցությունների ինստիտուցիոնալացման բարեկոխումները (գործառությային, կառուցվածքային և օրենսդրական) դեռևս շարունակվում են։ Հատկանշական են մյուս կողմից ԿԱԵ երկրների ու << միջև տարբերությունները՝ պայմանավորված զիսավորապես պետական կառավարման տարբեր ծևերի, կուսակցական ու ընտրահամակարգերի ընտրությամբ։ Բազմակուսակցականությունն ու քաղաքական կուսակցությունների գործառությունը <<-ում չպակվեց քաղաքական համախմբման հաջողությամբ՝ խորացնելով քաղաքական դաշտում գործող ուժերի բներացումն ու հատվածականությունը։ Ավելին՝ կուսակցությունները չստանձնեցին քաղաքական էլիտայի հավաքագրման հիմնական խողովակի դերը, որովհետև <<-ն, ի տարբերություն ԿԱԵ երկրների մեծ մասի, խորհրդային վարչակարգից անցավ նախագահական կառավարման ծեփ։ Բացի դրանից <<-ն այդպես էլ չմշակեց (ոչ էլ առաջարկվեց) քաղաքական էլիտայի հավաքագրման մոդել՝ ի տարբերություն ԿԱԵ երկրների, որոնք ինտեգրեցին ու ադապտացրին «ԵվրոԵլիտայի» մոդելը։

Վերջերս լայն ժողովրդականություն ու տարածում է գտել այն կարծիքը, թե քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացը դուրս է եկել արհասարակ ինստիտուտների (կուսակցությունների, ընտրությունների) գործառության տրամադրանական շրջանակներից՝ հղում անելով զիսավորապես դրանց անարդյունավետության վրա։ Փոխարենը ոճային է քաղաքական էլիտայի հավաքագրման ոչ ինստիտուցիոնալ խողովակների, սոցիալական բարեկեցության սկզբունքների արդյունավետության մասին տեսակետները։ Կուսակցության ինստիտուտի անարդյունավետության, կամ գուցե ավելի ճիշտ կը իմի նշել, արդյունավետության անկման մասին պմրումը սոցիալական հետևորդներ է հավաքում նաև ներկայացուցչական ժողովրդավարություններում։ Դա պայմանավորված է զիսավորապես քաղաքականության այլ ակտորների ազդեցության մեծացման, այլընտրանքային կազմակերպությունների հասարակական շարժումների ու կազմակերպությունների, շահերի խմբերի, քաղաքական ակցիաների պրակտիկայի տարածման և մի շարք այլ գործոններով [13]։ Չի կարելի չհամաձայնել, որ քաղաքականության մշակման և քաղաքական որոշումների ընդունման գործընթացի տեսանկյունից, անշուշտ, կուսակցության ինստիտուտը գործառության արդյունավետության անկում է ապրում ամենուր, սակայն որպես քաղաքական էլիտայի հավաքագրման ինստիտուցիոնալ խողովակ կուսակցությանը փոխարինող ինստիտուցիոնալ այլ ծևաչափ դեռևս չկա, այնպիսի ծևաչափ, որը թույլ կտա քաղաքական գործիչներին աշխատել թիմով։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Mosca G.**, The Ruling Class (Elementi di Scienza Politia), Translated by Hannah D.Khan, New York and London,1939, McGREW-HILL Book Company, p. 154, Michels R., Political Parties: A Sociological Study of the Oligarchical Tendencies of Modern Democracy, Translated by Eden and Ceder Paul, Kitchener, Batoche Books, 2001, p. 219
2. **Մինասյան Մ.**, Քաղաքական էլիտա, Եր., 2005, էջ 204:
3. **Diamond L., Gunter R.**, Political Parties and Democracy, The Johns Hopkins University Press and the Natioanl Endowment for Democracy: A Journal of Democracy book, Baltimore and London, 2001, p. 55-57
4. **Michels R.**, Political Parties: A Sociological Study of the Oligarchical Tendencies of Modern Democracy, Translated by Eden and Ceder Paul, Kitchener, Batoche Books, 2001, p. 124-125
5. **Huntington S. P.**, The Third Wave: Democratization in the Late Twentieth Century, 1991, Political Parties and Party Types-Conceptual Approaches to the Institutionalization of Political Parties in Transitional States: The Case of the Philippines: Published by Konrad-Adenauer-Sifting, 2010
6. **Bugaiski J.**, Political Parties of Eastern Europe: A Guide to Politics in the Post-Communist Era, The Centre for Strategic and International Studies, 2002
7. **Пшеворский А.**, Демократия и рынок. Политические и экономические реформы в Восточной Европе и Латинской Америке, «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), М., 2000
8. **Lijphart A.**, Patterns of Democracy: Government Forms and Performance in Thirty-Six Countries, Yale University Press, 1999, p. 368
9. **Տվյալների հիմնական աղյուրը՝ Parliamentary Elites in Central and Eastern Europe: Recruitment and Representation**, Ed. by Semenova E., Edinger M., Bset H., by Routledge, N.Y., 2014, -318
10. **Casa-Berato F., Piccio D. R., Rashkova E. R.**, Party Law in Comparative Perspective: The Legal Regulation of Political Parties, Working Paper 16, March 2012, p. 12
11. **Eichbaum Ch., Shaw R.**, Partisan Appointees and Public Servants: An International Analysis of the Role of the Political Adviser, Edward Elger Publishing, Inc.: USA, 2010, p. 10-12
12. **Williams R., Paun A.**, Party People: How do- and how should-British Political Parties select their Parliamentary Candidates?, Institute for Government, 2011, p. 15
13. **Քերյան Գ.**, Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը, Եր., «Վան Արյան», 2002, էջ 288
14. **Քերյան Գ.**, Կուսակցությունների տիպավորման գաղափարաքաղաքական սկզբունքի կիրառման հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», N 3(144), էջ 47-59
15. **Մխիթարյան Մ.**, Քաղաքական ինստիտուտների ծևավորումը <<ում, .21-րդ ԴԱՐԵ, N 1 (5), Եր., 2007, էջ 119-127
16. Political Parties in Conflict-Prone Societies: Regulation, Engineering and Democratic Development, Ed. by Benjamin Reilly and Per Nordlund, Centre for Democratic Institutions (CDI), International Institute for Democracy and Electoral Assistance (IDEA) and United Nations University (UNU), 2008, p. 27

ԱՍՓՈՓԱԳԻՐ

Կուսակցությունը քաղաքական էլիտայի հավաքագրման
գործընթացի համատեքստում
Կատերինա Ալբունյան

Հոդվածում քննվում է քաղաքական կուսակցությունը որպես քաղաքական էլիտայի հավաքագրման հիմնական և առանցքային ինստիտուտ: Կուսակցությունների կայացման և ինստիտուցիոնալացման խնդիրը քաղաքական էլիտայի հավաքագրման համակարգերի առանձնահատկությունները պայմանավորող գլխավոր գործուներից են: Վերոնշյալ խնդիրների համապարփակ ուսումնասիրության ժամանակ հոդվածում անդրադարձել ենք կուսակցությունների գործառության և գործառության որոշ այլ ասպեկտների, ինչպիսիք են՝ կառուցվածքը, կուսակցությունների գործունեության օրենսդրական կարգավիրման առանձնահատկությունները: Հաշվի առնելով կուսակցությունների գործառության արդյունավետության անկման միտումներն ամբողջ աշխարհում՝ կարծում ենք՝ հոդվածում բարձրացված խնդիրները ոչ միայն արդիական են, այլև օրակարգային:

РЕЗЮМЕ

Роль политических партий в контексте рекрутинга политических элит
Катерина Алтунян

Ключевые слова: политическая элита, политическая партия, рекрутование элит, парламентская элита, механизмы рекрутинга элит, открытая система рекрутинга, институционализация партий, представительная демократия, партийная система.

Политические партии являются неотъемлемой частью процесса рекрутования политических элит. В рамках статьи сам процесс включает изучение трех основных аспектов проблемы: основные функции партий, современную структуру и законодательное урегулирование деятельности политических партий. Подчеркивая функциональную роль политических партий как в президентской, так и парламентской формах правления, основное внимание было сосредоточено на последнем. Учитывая тот факт, что роль политических партий, как основных институциональных каналов рекрутинга политической элиты переживает кризис эффективности, в том числе и в армянской действительности, вышеподнятые вопросы являются не только своевременными и актуальными, но и стоят в политической повестке дня.

SUMMARY

The Role of Political Parties in the Framework of Political Elites Recruitment
Katerina Altunyan

Keywords: political elite, political system, recruitment of political elites, parliamentary elite, mechanisms of recruitment of political elites, system of elite recruitment, institutionalization of political parties, participatory democracy, party system.

The study of Political party is an integral part of the process of recruitment and selection of political elites. A framework of current research includes three main elements of that process: the basic functions, the contemporary structure and legislative regulation of political parties' action. Emphasizing the role of political parties both in presidential and in parliamentary forms of government, the attention primarily is focused on the latter. Taking into consideration the fact that the role of political parties as key institutional channels of recruitment of the political elite is facing a crisis of efficiency, also in the Armenian reality, the issues raised above are not only timely and relevant, but are on the agenda.